ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԻՆԴՈՒԿՑԻԱՅԻ ՎԵԿՏՈՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՈՍԱՆՔԱԿԻՐ ՇՐՋԱՆԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ

Մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորի ուղղությունը կարել է որոշել նաև հոսանքակիր շրջանակի (փոքր չափերով հոսանքակիր փակ կոնտուր) օգնությամբ: Մագնիսական սլաքի փոխարեն դաշտում հոսանքակիր շրջանակ տեղադրելիս վերջինս դասավորվում է այնպես, որ նրա նորմալը (շրջանակի հարթությանը տարված ուղղահայացը) համընկնում է մագնիսական սլաքի ցույց տված ուղղությանը: Հոսանքակիր շրջանակի նորմալի ուղղությունը միարժեքորեն որոշվում է խցանահանի կանոնով. այն ունի խցանահանի սայրի համընթաց շարժման ուղղությունը, եթե խցանահանի բռնակի պտտման ուղղությունը համընկնում է շրջանակում հոսանքի ուղղությանը:





Այսպիսով՝ մագնիսական ինդուկցիայի վեկտորի ուղղությունը կարելի է որոշել նաև հոսանքակիր շրջանակի օգնությամբ: Դրա համար պետք է դաշտի տվյալ կետում տեղադրել հոսանքակիր շրջանակ, նրան տալ ազատ պտտվելու հնարավորություն և հավասարակշռության դիրքում խցանահանի կանոնով որոշել շրջանակի նորմալի ուղղությունը: